

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ԱԿՌ-ԱՄԱՆԵԱԿ

Տրամախառն Քօմիտի Երեք Արարուածով

**Խմբագրեց եւ ծանօթագրեց
Գոկոտ. Վաչէ Ղազարեան**

ՄԱՅՐԵՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

2000

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ ԱՆՏԻՊ ԵՐԳԻԾԱԽԱՂԸ՝

«ԱԿՈՒԱՄԱՆԵԱԿ»

1981-ի աւարտին, Վահան Թէքէեանի վերջին տարիներու սերտ գործակից և կտակակատար իրաւաբան Շաւարշ Սեյժոնքեան Երևանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի Թանգարանին կը յանձնէր Քերթողին արխիւ-ւին մնացորդացը:

Յանձնուած նիւթերուն մէջ էր Թէքէեանի ստեղծագործական աշխարհին նոր երանգ մը աւելցնող խնդրոյ առարկայ երգիծախաղը՝ «Ակումանեակ»ը, տարածուող երեսուն թուագրեալ ձեռագիր էջերու և երկու ներդիրներու վրայ:

Նիւթերը նաև կ'ընդգրկէին կէտադրական առումով անխնամ մեքենագրեալ մէկ օրինակը «Ակումանեակ»ին, յայտնապէս պատրաստուած Քերթողին մահէն ետք, հաւանաբար ներմուծուելու համար անոր «Ամբողջական Երկեր» անունը կրող շարքին մէջ, որուն իրականացումը կը հետապնդէին եգիպտահայ գրող ու գրասէր բարեկամները Վահան Թէքէեանի, և որ սակայն չհասաւ իր լրումին:¹

Երգիծախաղը, աննշան ուղղումներու ենթարկուած ձեռագիրէն դատելով, կը թողու հապճեպով և հաւանաբար երկու շունչով գրուած ըլլալու տպաւորութիւնը: Ան թուղթին յանձնուած պէտք է ըլլայ 1924 թուականին, Փարիզ:

Երգիծախաղին գործող անձերը յայտնի անձնաւորութիւններ են և Թէքէեան ճիշդ ըրած է որ դիւրաւ բացայայտուի անոնց ինքնութիւնը: Արդէն երգիծախաղին առաջին երկու բառերն իսկ յստակ կը դարձնեն թէ նիւթը կը վերաբերի Հայ Ազգային Պատուիրակութեան և անոր անդամներուն:

Իշխան Գուպարեան Պօղոս Նուպարն է՝ հիմնադիրը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան և նախագահը Հայ Ազգային Պատուիրակութեան: Թէքէեան ուղղակի թէ անուղղակի կերպով կ'ակնարկէ թէ Պօղոս Նուպար կը սիրէ ինքզինք շրջապատուած տեսնել խնկարկուներով, օտա-

րախօս է, ճշդապահ, անտարբեր՝ այլոց տեսակէտներուն նկատմամբ, ինքնագլուխ գործող, բայց նաև՝ տեղի տուող հաւաքական ուժի առջև:²

Տոքթ. Յաւրոզ Ազգային Պատուիրակութեան դաշնակցական անդամ, բժիշկ և հասարակական գործիչ Յակոբ Նելրուզն է: Կը թուի թէ Թէքէեան ուզած է զայն ներկայացնել իբրև հետևող՝ քան թէ նախաձեռնող անձ:

Մամաջանեան Ռուսիոյ խորհրդարանի երբեմնի անդամ, Կովկասի Հայ Ժողովրդական Կուսակցութեան հիմնադիրներէն և Ազգային Պատուիրակութեան արևելահայ անդամներէն Միքայէլ Բաբաջանեանն է, օտուած կենցաղագէտի և դիւանագէտի յատկութիւններով:³ Ռուսաստանն ու ռուսական քաղաքականութիւնը կը կազմեն անոր մարզը, մինչ Անգլիան և անգլիական քաղաքականութիւնը կը կազմեն մարզը Կապիչեանի՝ Ազգային Պատուիրակութեան լոնտոնաբնակ անկուսակցական անդամ Յարութիւն Մոստիչեանի, որ կարծէք քիչ կը մնայ որ Պօղոս Նուպարէն «Դո՞ւն ալ, Բրուտոս»-ի նման յանդիմանութիւն մը ստանայ:

Պանչօեան, որ բո՛ւն հերոսն է երգիծախաղին, Արշակ Չօպանեանն է, խորհրդական անդամ Ազգային Պատուիրակութեան: Չօպանեան այս երգիծախաղին մէջ ներկայացուած է ամենամոթ գոյներով, որոնք յատկապէս կը շեշտադրեն եսակեդրոն նկարագիրը «Հայ մշակոյթի դեսպան» մակդիրով մեծարուած արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակագիր և հասարակական գործիչ Չօպանեանի, որուն վաստակը այլապէս անուրանալի է մշակութային թէ հասարակական-քաղաքական գետնի վրայ:⁴

Կայ նաև Չորք Մարգարանի Քելէկեան որբանոցի տնօրէն Պաթմանեանը, որ երրորդ արարին մէջ կը ներկայացուի թանաեան մականունով ևս: Պաթմանեան-թանաեան կը ներկայացնեն ռամկավար Միքայէլ Նաթմանեանը, որ կրթական կարևոր ծառայութիւն մը ունեցած է Կիլիկիոյ և Միջին Արևելքի մէջ:

Կարելի է ենթադրել թէ երգիծախաղին գրութեան բո՛ւն դրդապատճառը Թէքէեանի գժտութիւնն էր իրեն գաղափարակից ռամկավար Արշակ Չօպանեանի հետ և յատկապէս՝ իր դժգոհութիւնը իր տարեց գրչեղբօր յոբելեանը 1925-ի Յունուար 3-ին Փարիզի մէջ նշելու ուղղութեամբ առնուող քայլերէն: Թէքէեան համոզում գոյացուցած էր թէ գաղթաշխարհի մէջ զանազան հիմնահարցեր դիմագրաւող հա-

յուլիսին յոբելեանով մը զբաղեցնելը անտեղի և նոյնիսկ վնասաբեր ժամավաճառութիւն մը պիտի ըլլար, և այդ մասին իր մտածումները բանաձևած էր Պոլսոյ «Վերջին Լուր»ին մէջ Բիկմալիոն կեղծանունով:⁵

Թէքէեան մօտէն ծանօթ էր իր բոլոր հերոսներուն և այս կամ այն մարմնին մէջ ու այս կամ այն աւիթով գործակցած անոնց հետ: Տուեալ պարագային, ենթակայները ճանչնալու համար մասնաւորաբար օգտակար եղած էր 1919-1920 շրջանին իր անդամակցութիւնը Պօղոս Նուպարի գլխաւորած Հայ Ազգային Պատուիրակութեան, իսկ այնուհետև ալ զանազան աւիթներով սերտ գործակցութիւնը այդ մարմնին հետ:

Սխալ պիտի ըլլայ անձնական քինախնդրութեան մը շրջագիծով պարագրել այս քաղաքական սև երգիծանքը, որուն նմանին չենք հանդիպած մեր գրականութեան մէջ: Ան մեզի կը բերէ հանրագումարը Թէքէեանի փորձառութեան՝ իբրև Ազգային Պատուիրակութեան անդամի: Աւելին, վե՛ր բարձրանալով ինքնութիւններէն գործող անձերուն, դիմելով՝ մասնաւորէն ընդհանուրին, այս երգիծախաղը կըրնանք դիտել իբրև մարմնաւորում մէ՛կ կողմէ՛ դեկավարութեան մը, որմէ՛ կ'ակնկալուէր հաստատուն խարխիւ մը ստեղծել գոյութիւնը վտանգուած հայ հաւաքականութիւններու համար, իսկ միւս կողմէ՛ անձնակերտն գործիչի մը, որ կը կրէ անձնութեան պատմութեան:

Ինչպէս Երուանդ Օտեանի Փանջունին դարձած է իմաստակ և արկածախնդիր քաղաքական-յեղափոխական գործիչի ընդհանրական կերպար՝ անկախաբար անոր նախատիպ դաշնակցական ձախաւեր գործիչի կերպարէն, այնպէս ալ Թէքէեանի Պանչօեանը կրնայ նկատուիլ ընդհանրական կերպարը եսակերտն ազգային գործիչի՝ անկախաբար ենթակային քաղաքական պատկանելութենէն:

Այլ խօսքով, կարևորը այն չէ թէ Պօղոս Նուպարի մը կամ Արշակ Չօպանեանի մը անձերուն տրուած թէքէեանական գնահատումը իրականութեան որքանո՞վ կը համապատասխանէ, այլ ա՛յն՝ թէ երգիծագրութեան հեղինակը որքանո՞վ յաջողած է բացայայտել ողբերգութիւնը, որ ծուարած է կատակերգութեան ետին, և իջնել յատակը լուսաւոր մակերեսով մութ ջուրերու:

Մեզի կը թուի թէ հեղինակը գերազանց կերպով յաջողած է իրագործել իր խնդիրը՝ իրագործել՝ ընդհանուր առ-

մամբ թատերական յաջող գործ է մը ակնկալուող տարրերու յարգումով:— աշխոյժ և խօսուն նկարագրականներ, դիպուկ դարձուածքներ, հակադրական վիճակներ, յարաբերաբար կարճ նախադասութիւններով առոյգ երկխօսութիւններ:

Ինչպիսի՜ վարպետութեամբ երգիծագիրը կը ներկայացնէ մարմնի մը նախագահին ինքնագլխութիւնը ցայտեցնող սա կացութիւնները:—

Մամաջանեան.— ... Թոյլ կուտա՞ք որ իմ կարծիքս յայտնեմ:

Իշխան Գուպար.— Անշուշտ, մանաւանդ որ ժողովը սկսած չէ դեռ...

.....

Մամաջանեան.— ... Այսօրուան օրակարգի գիւթերը որո՞նք են...:

Իշխան Գուպար.— Օրակարգ չկայ: Մինչև հիմա օրակարգ ունեցա՞ծ ենք երբեք: Գոյութիւն ունեցող բոլոր խնդիրներուն մասին ես արդէն գրած կամ դիմած եմ ուր որ պէտք է:

Կամ որքա՞ն շեշտ կերպով ան բեմ կը հանէ ուռած եսով ազգային գործիչի կերպարը, երբ անոր բերնին մէջ կը դնէ այսպիսի դիպուկ խօսքեր:—

«Եթէ վստահ ըլլայի թէ ուրիշ մէկը կրնայ ինծի չափ լաւ կատարել այս պարտականութիւնը...», «... միայն ե՛ս լաւ կը ճանչնամ զանոնք...», «... ամէն ատեն գրել՝ զիս և Հայկ-Հարցը իրենց [օտարներուն] յիշեցնելու համար...», «Ազգային դատին փրկութիւնը, Կիլիկիոյ պարպումը կամ պահումը... ամէն բան... սկուսներէս կախուած է», ևլն.:

Կամ՝ գայն կը ներկայացնէ ողբերգականօրէն ծիծաղելի վիճակներու մէջ— օտարներու հեզնանքին առարկայ ըլլալը, միջազգային իրաւագիտութեան մասին ճառը կէս ձգելը, իր ոտանաւորներուն գործածուելով հիննալու մտավախութիւնը, ևլն.:

Գլուխ գործոց քաղաքական քննադատութիւն մըն է այն հատուածը, ուր Գործապետեանի և Պանչօեանի՝ ատամնաշարը դէպի արևմուտք ընթանալով որոնելու վերաբերեալ երկխօսութեան ընդմէջէն Թէքէեան կը դատապարտէ արևմտասէր գործիչները, որոնք հայ ժողովուրդին քաղաքական յաջողութիւններու յոյսը միշտ կապած են Արևմուտքի հետ:

Յատկանշական է երգիծախաղը իր աւարտին բերող «Ո՛վ Քամպուօն» բացազանչութիւնը: Զօրավար Փիէր Քամպրոն

(1770–1842) Ուոթթըրրուի ճակատամարտի շրջանին կը գլխաւորէր Նաիրոյէոնի կայսերական պահակագունդը: Անգլիացիները շրջապատելով պահակագունդը՝ կը պահանջեն անձնատուր ըլլալ: Ըստ զօրավարին արձանին վրայ պահպանուած մակագրութեան, անոր վերջին արտայայտութիւնը կ'ըլլայ՝ «Պահակագունդը կը մեռնի, բայց չի՛ յանձնուիր»․ մինչդեռ համաձայն երկրորդ տարբերակի մը՝ զօրավարը յանդգնութիւնը կ'ունենայ "Merde!" (կղկղանք) բացագանչութեամբ արտայայտելու իր արգահատանքը:

Ուրեմն Պաթմանեան-Թանանեանի բերնով պարզապէս կ'ուզուի «Ո՛վ գարշելի» արտայայտութեան մէջ խտացնել Պանչօեանի իսկութիւնը, որով և ամբողջ երգիծախաղը կը վերածուի Թէքէեանի արգահատանքը դրսևորող նիւթի:

Թէ երգիծախաղը որքանո՞վ է բեմադրելի, կամ ինչպիսի՞ գեղագիտական վէճեր կը յարուցանէ՝ յատկապէս եթէ նկատի ունենանք «կոյուղիաբանութիւնը», կը մնայ մեր նիւթէն դուրս և բան չի՛ փոխեր գէթ խաղին ընթերցանական որակէն:

Թէքէեանի «Ակուամանեակ»ը կը բերէ նորութիւն մը ո՛չ միայն իր, այլև ամբողջ հայ գրականութեան:

* * *

Վերի սեղմ նախաբանը փակելով անցնելէ առաջ թատերախաղին՝ հարկ է նշել թէ Վահան Թէքէեան կանուխէն մասնաւոր հակում մը ցուցաբերած է թատերագրութեան հանդէպ: Իրմէ ծանօթ են երկու այլ թատերագրական փորձեր, երկո՞ւքն ալ անաւարտ:

Առաջինը կատարած է ան 1901 թուականին, երբ կը գտնուէր Մարսէյլ: Յիշեալ տարուան Հոկտեմբեր 28-ին Արշակ Չօպանեանի հասցէագրած իր նամակին մէջ կը յայտնէ․ «... «Արտաւագո Բ»-ի վրայ ողբերգութեան մը ձեռնարկած եմ ... կ'ուզեմ շատ խնամքով ամբողջական գործ մը մէջտեղ հանել: Ասոր համար պատմական տեղեկութիւններու պէտք ունիմ և կ'ուզէի մասնաւորապէս ժամանակակից ասորեստանցոց ու պարթևներու վրայ, որոնց բարքերուն ազդեցութիւնը պէտք է տիրած ըլլայ Արտաշէսի արքունիքին մէջ, լաւագոյն ֆրանսերէն հրատարակուած գիտական գործ մը ձեռքիս տակ ունենալ»:⁶

Յիրաւի, Երևանի Գրականութեան և Արուեստի Թանգա-

րանին մէջ պահպանուող Թէքէեանի արխիւին մէջ (ԳԱԹ-ՎԹՖ, թիւ 1, էջ 52-54) կան ցարդ անտիպ ձեռագիր երեք էջեր, որոնք գաղափար մը կու տան այն նախապատրաստական աշխատանքին մասին, զոր Թէքէեան կատարած է՝ առաւելաբար հիմնուելով Մովսէս Խորենացիի «Պատմութիւն Հայոց»-ին վրայ:

Այդ էջերը կու տանք այս հատորիկին «Յաւելուած» բաժնով:

Երկրորդ փորձը կատարուած է 1936-ին շատ հաւանաբար: Գահիրէ հրատարակուող «Փունջ» մանկական երկչաբաթաթերթին մէջ Թէքէեան հրատարակութեան տուած է «Մեղոյշ Եւ Տարփիկ» խորագրով «Դիւթախաղ» մը, որուն առաջին արարուածը մեզի անծանօթ պատճառներով չէ ունեցած իր շարունակութիւնը:⁷

Ակնարկելով անոր, Միքայէլ Կիւրճեան նամակի մը մէջ նշած է. «Մեր գրականութեան մէջ աննախընթաց պիտի ըլլայ»:⁸

Արդարեւ, աննախընթաց փորձ մը՝ թէ՛ իբրև մտայղացում, թէ՛ իբրև խորք.— յաւերժահարսեր, որոնք չեն ուզեր մարդանալ: Անոնք գարշանք և սոսկում կը զգան մարդանալէ, քանի որ մարդացումը գիրենք կը գրկէ ազատութենէ և անաղարտութենէ: Աւելի՛ն, անոնք մարդացումը մա՛հ իսկ կը համարեն:

Երկու յաւերժահարսերուն՝ Մեղոյշի և Տարփիկի մարդացումը կը կատարուի իշխանի մը և փայտահատի մը ձեռքերով: Կը թուի թէ յաջորդ արարուածին մէջ իշխանին և փայտահատին մարդկայնական յատկանիչներուն հակադրումով պիտի գարգանար գործողութիւնը: Նոյնիսկ կը թուի թէ Քերթողին համակրանքը պիտի երթար կոշտ ձեռքերով բայց ազնիւ փայտահատին...:

Յաւելով «Դիւթախաղ»-ին թերաւարտ մնացած ըլլալուն համար, մեր գոհունակութիւնը կը սահմանափակենք ամբողջացեալ «Ակումանեակ»-ով և զայն կը ներկայացնենք հանրութեան:

Դոկտ. Վաչէ Ղազարեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1- Միքայել Կիրճեանէ, Սարգիս Սահակեանէ, Արշամ Տատրեանէ, Ժագ Ա. Յակոբեանէ և Սահակ Պալըզճեանէ բաղկացած մարմինը կրցաւ ծրագրուած տասնհինգ հատորներէն միայն վեցը լոյսին բերել: Արշամ Տատրեանի կանխահաս մահը կասեցուց ծրագրին ամբողջացումը (*Մամուլի Մէջ Տպուած և Անտիպ Երկեր ու Նամակներ Վահան Թէքէեանէն*, հուաքեց և ծանօթագրեց Դոկտ. Վասէ Ղազարեան, Պէյրութ, 1987, էջ 7-8):

2- Թէքէեան 10 Ապրիլ 1920 թուակիր անմակի մը մէջ կ'ըսէ. «Նուպարի թերութիւնները ամենախոշոր են, ներքին և արտաքին քաղ[աքական] հեռատեսութիւն չունի. իր ամբողջ ջանքն է գործը բանի մը կապել և քաշուիլ. Հայկ[ական] խնդիրը սոսկ արժանապատուութեան խնդիր մըն է իրեն համար, ապագան չէ որ զինք կը մտահոգէ, այլ ներկան...» (*Պայքար ամսագիր, Պոսթոն, Ա. տարի թիւ 5, Օգոստոս 1993, էջ 41*):

3- Նոյն 10 Ապրիլ 1920 թուակիրին մէջ Պապաջանեանի մասին Թէքէեան կը յայտնէ. «... իմ անչցած միակ հայ պետական մարդս է ներկայիս... Պապաճանեան ռուսահայոց մէջ ալ եզական է... Առողջ մտածողութիւն, ամուր նկարագիր, նորը վարմունք՝ յատկանշիչներն են այս քաղաքագէտին...» (*Նոյն, էջ 41-42*):

4- Արփիար Արփիարեանի սպանութենէն (1908) ետք Թէքէեան Զօպանեանի հանդէպ ունեցած է միշտ վերապահ ընթացք, որ երբեմն հասած է կատարեալ խզումի և հրապարակային հակադրութեան, մնալով հանդերձ գործակիցներ նոյն կուսակցութեան և նաև անոր կեդրոնական վարչութեան մէջ: Զօպանեան մամուլով պաշտպանած էր Արփիարեանի սպանութիւնը կազմակերպող(ներ)ը, ինչ որ շարժած էր Թէքէեանի գայրոյթը (*Վահան Թէքէեան Իբր Հանրային Մարդ և Հրապարակագիր*, Արշակ Ալպօյանեան, Պէյրութ, 1988, էջ 94-95): 30 Յուլիս 1924-ին Թէքէեան Արշակ Ալպօյանեանին կը գրէ. «Զօպանեանին հետ բարև ալ չունինք հիմա. յրբեւեանի պատրաստուելու վրայ է... Կը կարդա՞ս «Ապագայ»ին մէջ գրածները. զգուելի և ծիծաղելի միանգամայն» (*Վահան Թէքէեան, Նամականի, կազմեց, խմբագրեց և ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, 1983, էջ 269*): Իսկ 8

Նոյեմբեր 1925-ին Լևոն Ջալեմ Սիրմէլեանին կը գրէ. «Արշակ Զօպանեան.- Կատարելագործուած Սիրունի մը, մէջտեղը խոշոր, ուռեցած, ծիծաղելի, վնասակար «ես»ով մը» (*Սիրակարօտ Հոգիներ - Լևոն Ջալէն Սիրմէլեանին և Վահան Թէքէեանին Փոխանակած Նամակները*, խմբագրեց և ծանօթագրեց Դոկտ. Վաչէ Ղազարեան, Ուղիթիւմ, 1998, էջ 232):

5- Բիկմալիոն, Անդաստան- «Ամէն բանին ժամանակը կայ», 9 Յունիս 1924, թիւ 3132:

6- *Արեւմտահայ Գրողների Նամականի*, Գիրք Զ., Պրակ Ա., կազմեց և ծանօթագրեց Գոհար Ազնաւորեան, Երևան, 1972, էջ 323:

7- *Փունջ* երկշաբաթաթերթ, Գահիրէ, 1936, թիւ 22-23, էջ 292-294:

8- Գրականութեան և Արուեստի Թանգարան, Վահան Թէքէեանի Յոճոյ, թիւ 122:

ԱԿՌ-ԱՄԱՆԵԱԿ

Տրամախառն Քօմէտի Երեք Արարուածով

ԾԱՆՕԹ.—

Օտարաբանությունները, որոնք բացատրուած են «Բառա-
րան» բաժնին մէջ, շեղագրուած են մեր կողմէ: Հաստ շեղա-
գրութեամբ բառերը կը ներկայացնեն Թէքէեանի բնագրային
ընդգծումները: Ծանօթագրություններ բաժնին մէջ չենք ընդ-
գրկած ֆրանսացի քաղաքական և կրօնական դէմքերը, որոնց
մէկ մասը բացատրութեան չի կարօտիր, մինչ ուրիշներ առաւել
կամ նուազ կարևորութեամբ դերակատարներ եղած են ֆրան-
սական դահլիճին ու Ազգային Ժողովին մէջ կամ անոնցմէ
դուրս:

Վ.Ղ.

Ա. Արար

Ազգ[ային] Պատ[ուհրակութիւն]ը նիստ գումարած է իր նախագահին բնակարանը, անոր աշխատութեան սենեակին մէջ: Նախագահը, մուտքի դրան ձախ կողմը գրաւող պայտածե գրասեղանի մը ետին, նամակներ կարդալով և ստորագրելով գբաղած է: Գրասեղանին առջև՝ թիկնաթոռ մը: Անդին՝ գզրոցներ, պզտիկ գրադարակ մը, պատերուն վրայ նկարներ: Դիմացը՝ ուրիշ թիկնաթոռ մը, անոր քովը՝ քանաքէ մը և ասդին քանի մը աթոռներ՝ ամէնքն ալ կաշեպատ: Թիկնաթոռին մէջէն՝ սուր և սև նայուածքը կը ցայտէ Պ[արոն] Կապիչեանի՝ որ լայն ճակատ մը և աղեբեկ քառանկիւն մօրուք մը ունի նիհար մարմինի մը վրայ: Քանաքէին վրայ՝ նախ Տոքթ. Յաւրոզ, Հաստակազմ, ճերմկած մազերով, տժգոյն երեսով և ծովէն կէս ժամ առաջ հանուած բայց տակաւին շնչող ձուկի մը աչքերով. յետոյ՝ Պ[արոն] Մամաճանեան, փոքրամօրուս, բարեձև և քաղաքավարի՝ մինչև անգամ նայուածքին և նստուածքին մէջ: Ամէնքն ալ Պատ[ուհրակութիւն]եան անդամ: Անոնք իրենց մէջ ցած ձայնով խօսքեր կը փոխանակեն երբեմն՝ իրարու վրայ ծռելով, մինչդեռ նախագահը երբեմն մէկ և երբեմն երկու անգամ կը կոխէ ելեկտրական գանգակի խնձորին վրայ. երբ մէկ անգամ կը կոխէ՝ դուռը կը բացուի և կ'երևայ գլուխը ուսերուն մէջ քաշուած, օտարի դէմքով լիկած ծերունի մը որմէ նախագահը կ'ուզէ «Լոնտոնի թղթածրարը», կամ՝ «Նախարարութեան» կամ «Լէգէտնի» կամ ուրիշ ո և է Պատուհրակութեան գործերուն վերաբերող թղթածրար մը. գանգակը երկու անգամ հնչելուն՝ կ'երևայ հայկ[ական] դիմագծութեամբ, սև պեխերով, սև աչքերով և սև մազերով առոյգ երիտասարդ մը որ կը հրաւիրուի բերել «Պանքային», «Ք. Ընկերութեան», «Փ. հաշիւին» թղթածրարը: Երկու քարտուղարները, իրարմէ ընդօրինակածի պէս, ձեռքերնին շփելով պահ մը կը կենան դրան մէջ ու կ'անհետանան՝ իւրաքանչիւրը երեք չորս անգամ «Շատ լաւ, Վսեմութիւն», «Ահաւասիկ, Վսեմութիւն», «Կարծեմ, Վսեմութիւն», «Այո՛, Վսեմութիւն», «Ո՛չ, Վսեմութիւն» բառերը միայն արտասանելով:

**ԱՐՏԱԻԱԶԳ Բ.
Նօթեր**

*Ազատ, ազատորեար (նախարարաց տոհմ)
անազատ (հասարակ ժողովուրդ)
աւագ և կրտսեր նախարարութիւններ
" (բարձ և պատիւ աւագութեան)
" ներու մէջ «առաջին դահ», Բ. դահ, Գ. դահ ևլն.
Վարաժնունիք, Դիմաքսեանք, Տրունիք, Առաւելեանք,
Տամատունիք ևլն.
հեծելագօր
նետ
մանուկներ որդի*

*Որսեր- որսեր արքայազանց կրթութեան հ[ա]մ[ա]ր
Կանաչք պալատի մէջ- Բագմակնութիւն, առաջին կինը
«տիկին» որուն կը հագցնէին ծիրանի, գլխին թագ,
առագաստ*

*Յուդարկաւորութիւն- քող, փանդ[ի]ռ (երաժշտական)
գործիք), ճայնարկու կուսանք, եղերամայրք, գերեզմանին
շուրջը մի տեսակ ծանր պար*

*Աստուածներ- Յունական. Չևս՝ Անի ամրոցին մէջ Արամագ-
դին քով, Աթենաս՝ Թիլ՝ Նանէ դիցուհւոյ մեհեանին մէջ,
Արտեմիս և Հերակլէս՝ Երիզա՝ Անահիտին քով, Հեփեսոս՝
Բագայաւունջ գիւղ՝ Միհրի մօտ, Ափրոդիտէ՝ Աշտիշատ՝
Աստղիկի կողքին:*

*Քուրմեր- Վանունիք՝ քրմապետ Վահագնի ցեղէն մինչև Տիգ-
րան Բ. որ գրկեց*

*Դիւան (2)- ուսման վայրեր, դիւանագիրք «Մատեան Թագա-
ւորաց», «Մեհենից մատեան» որոնք Դարանաղ գաւառի
Անի ամրոցն էին*

*Ընդհ[անուր] վիճակ- Հայաստան Հռոմայեցւոց և Պարթևաց
մէջտեղ*

*Ժամանակակիցներ- Արտաւագդ Ա., Անտոնիոս, Կղէնպատրա,
Հրահատ Բ. (Պարթև)*

Արտաւազգէ Անտոնիոսի ձեռքով ոսկեշղթայուած Կղէոպատրային նուէր (Ն.Ք. 33):
Անտոնիոս իր յաղթութեան իբր յիշատակ ոսկի արծաթ դրամներ կտրել տուաւ. մէկ կողմը իր գլուխը և Հայոց արքայի թագը և շուրջը՝ «Անտոնիոս, Հայաստան յաղթուած», միւս կողմը Կղէոպատրայի պատկերը՝ այս ընծայաբերութեամբ՝ «Թագաւորներու Թագուհի Կղէոպատրային»: Արտաւազգի գլուխը բանտին մէջ կտրուեցաւ և դրկուեցաւ Մարաց Արտաւան թագաւորին (31):
Արտաւազգէ Ա.էն յետոյ, օտար պատմիչներ, մայրաքաղաք Հայոց Արտաշատ իսկ ազգերը Մծբին և Երեսիս. այս շրջանին մէջ շինուած քաղաքներ Երուանդակերտ, Երուանդապան, Վաղարշապատ:
Ալանք (Կասպից ծովուն մօտ բնակիչ):

**Արտաւազգ Բ.
 Անձինք**

Արտաշէս Բ. Թագաւոր որդի Սանատրուկի (հրմնոր. և արքունի տան վերակացու)
Սմբատ Բիւրատեան Բագրատունի թագադիր, սպարապետ արևմտ. գօրաց
Արգամ Մուրացան Բ.ական գահ և նախարար
Ներսէս դիմաքսեան (որդի Գիսակի [որ որդին էր Արտաշէսի ստնտուին])

<p><i>Տրունիք</i> <i>Ամատունիք</i> 1 <i>Արտաւազգէ Վրոյր</i> <i>Մաժան</i> 2 <i>Տիրան (Ա.) եղբայր</i> <i>Ջարեհ</i> <i>Աբեղոյ Աբեղեան (նախարար)</i> 3 <i>Տիգրան (Գ.) (եղբայր)</i> <i>Սաթենիկ</i> <i>Սմբատանոյշ, Սմբատուհի (Սմբատ Բագրատունիի աղջիկները)</i> <i>Երանեակ (Տիրանի աղջիկը Տրգատ Բագրատունիի հետ ամուսնացած)</i> <i>Արտաւազգի վերջին կինը</i></p>	<p><i>Շաւարշան. երկիրն Ալանաց գաղթականութենէն յետոյ կոչուած Արտագ:</i></p>	<p><i>Արտաշատ (մյրքղք)</i> <i>Արմաւիր</i> <i>Երուանդաշատ, վերջէն Մարմէտ, Բագարան</i> <i>Արգամին շնորհուեցաւ Բ.ական գահի հետ յակինթակապ պսակ, երկու ականջին օղեր և մէկ ոտքին կարմիր կօշիկ, նոյնպէս ոսկի դգալ, սրտառաքաղ և բաժակ գործածելու իրաւունք:</i></p>
--	--	--

Զարեհ Վրաց Քարձամ
 թագաւորէն բռնուեցաւ
 յետոյ Արտաշէս
 ապստամբեցաւ
 Հռոմայեցիներէն
 որոնց Տրայիանոս
 կայսրը երբ <.....> մեծ
 բանակով եկաւ,
 Արտաշէս ընդառաջ
 գնաց և հարկերով ետ
 դարձուց:
 Եղբայրները սպաննե-
 ցին որսի ատեն Մա-
 ժանը դաւաճան՝ կայ-
 սեր առաջ:
 Արտաշէս մինչդեռ
 Պարթևաց երկիրը
 կ'երթար Ադրիանոսի
 առաջարկութեամբ՝
 ճամբան [հիւանդացաւ]
 Մարանդ գաւառի
 Բակուրակերտ ականը
 [մ'նաց]:

Արգամ Արտաշէսը ճաշի հրաւիրած
 էր. արքայորդիքը ըսելով թէ դաւ է՝
 Արգամի վրայ ինկան և մագերը
 փետեցին. Արտաշէս դարձաւ և զօրք
 ղրկեց ցեղը ջնջելու: Երկու տարի
 ետքը ստացուածները ետ դարձուց:
 Յետոյ Արտաւագղ յափշտակեց
 Արգամէն Նախիջևան քաղաքը և
 Երասխի հիւսիսակողմի կալուածները
 և երբ Արգամի որդին զէնքով
 ընդդիմանալ ուզեց, Արտաւագղ թէ՛
 հօրը և թէ՛ որդւոյն ցեղովը ջնջեց.
 միայն քանի մը հոգի Արտաշէսի
 պալատը ապաւինելով ազատեցան:
 Յետոյ Սմբատին ալ՝ որ քաշուեցաւ
 Տմորիս և Արտաւագղ սպարապետ
 եղաւ. բայց միւս արքայորդիքը
 նախանձեցան և Արտաշէս անոնց
 բաժնեց. Վրոյրին՝ արքունի տան
 հազարապետ[ու թիւն], Մաժան՝
 քրմապետ, արևլ. բանակը՝
 Արտաւագղին, արևմտ. [բանակը]՝
 Տիրանին, հիւսիս. [բանակը]՝
 Զարեհին և հարաւայինը Սմբատին: